ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ-ում այժմ գործում են պետական կենտրոնական երեք արխիվ՝ պատմության կենտրոնական արխիվ, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվը, ֆոտո-ֆոնո-կինո փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվը։ Բացի այդ երեք պետական կենտրոնական արխիվներից, բոլոր միութիւնությունները, գերատեսչությունները, ձեռնարկությունները, խոշոր գործարանները, արդյունաբերական կենտրոնները, քաղաքային ու ռայոնական սովետներն ու ԲՈՒՀ-երն ունեն իրենց արխիվները, որտեղ պահպանվում են այնպիսի փաստաթղթեր, որոնք ենթակա չեն պետական կենտրոնական արխիվներին հանձնելու, բայց որոնք տվյալ հիմնարկի, գերատեսչության համար ունեն որոշակի գործնական նշանակություն, մանավանդ աշխատավորությանը համապատասխան տեղեկանքներով ապահովելու գործում։

1. Հայկական ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվ

ՀՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվում են կենտրոնացված ցարական ինքնակալության օրգանների, տնտեսական, կուլտուր-լուսավորական, հասարակական, բարեգործական և կրոնական հիմնարկների գործունեության ընթացքում ստեղծված վավերագրական նյութերը սկսած 1649 թ. մինչև 1920 թ.։ Արխիվի հիմնական հարստությունը ընդգրկում է 1828—1920 թթ.։

Պետական ղեկավարման տեղական օրգանների կարևոր ֆոնդերն են.

«Հայկական մարզային վարչությունը», «Կովկասյան փոխարքայի գրասենյակ», «Երևանի նահանգապետի գրասենյակ», «Երևանի նահանգային վարչություն», «Երևանի նահանգական գյուղացիական գործիչների ատյան», «Երևանի նահանգի և Կարսի մարզի հողագործության և պետական գույքերի վարչություն», «Երևանի արքունական պալատ», «Երևանի նահանգական վիճակագրական վարչություն», «Երևանի նահանգական վիճակագրական կոմիտե» և այլն ֆոնդերը, որոնցում կենտրոնացված են հարուստ և բովանդակալից նյութեր։ Այսպես, օրինակ, «Հայկական մարզային վարչություն» ֆոնդը պատկերացում է տալիս Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո երկրում ստեղծված կառավարման սիստեմի, ցարիզմի հարկային քաղաքականության, բնակչության վերաբնակեցման, հողային հարաբերությունների և քաղաքական կյանքի մյուս բնագավառների մասին։

«Կովկասյան փոխարքայի գրասենյակ» ֆոնդը պարունակում է տվյալներ Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում, տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների, պետական-վարչատնտեսական ապարատի, բնակչության սոցիալ-տնտեսական դրության, գյուղատնտեսության վիճակի և այլնի մասին։

«Երևանի նահանգապետի գրասենյակ» ֆոնդում նյութեր կան ռևոլյուցիոն շարժումների, ցարական կառավարության կողմից այդ շարժումների ղեկավարների նկատմամբ հսկողություն սահմանելու և հետապնդումների, «դաշնակցություն» պարտիայի կազմակերպման, այդ պարտիայի գործունեության, Հայաստանի տնտեսական վիճակի մասին։ Տեղեկություններ կան նաև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նահանգի տերիտորիայում միլիցիա և կամավորական ջոկատներ կազմակերպելու վերաբերյալ և այլն։

Հայ ժողովրդի կուլտուր-լուսավորական հիմնարկների, նրանց գործունեության, կրթության վիճակի, դպրոցներում դասավանդման մեթոդների, պարբերական մամուլի մասին պատկերացում են տալիս մի շարք ֆոնդերի՝ վավերագրական նյութերը։ Դրանցից առավել կարևորների թվին են պատկանում՝

«Երևանի նահանգի ժողովրդական ուսումնարանների» (ֆոնդ № 19, 3383 պահպանման միավորով), «Ներսիսյան» Հայոց ազգային հոգևոր դպրոցի (ֆոնդ № 2, 2769 պահպանման միավորով), «Երևանի արական գիմնազիա» (ֆոնդ № 1, 3553 պահպանման միավորով), «Մշակ» և «Մեր Ձայն» թերթերի խմբագրությունների արխիվային նյութերը։ Նշված ֆոնդերում տվյալներ կան նաև մշակույթի, արվեստի, հասարակական, քաղաքական կազմակերպությունների և ականավոր գործիչների վերաբերյալ։

Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման համար կարևոր աղբյուր են հանդիսանում կրոնական հաստատությունների ֆոնդերը։ Դրանցից առավել կարևորներն են՝ «Էջմիածնի լուսավորչական սինոդ», «Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան», «Վրաստանի և Իմերեթի Հայոց Թեմական կոնսիստորիա», «Նոր Նախիջևանի Հայոց հոգևոր Թեմական կառավարչություն» և այլ ֆոնդեր, որոնք հարուստ տվյալներ են պարունակում հայ ժողովրդի պատմության համարյա բոլոր բնագավառների մասին։

Հատկապես ուշադրության են արժանի «Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան» ֆոնդի այն

փաստաթղթերը, որոնք վերաբերում են «Հայկական հարցին», Հայաստանից և հայաբնակ վայրերից էջմիածին են հասել հայկական եղեռնի սրտաճմլիկ տեսարանները, փախստական հայերի անտանելի վիճակը նկարագրող բազմաթիվ նամակներ ու գրություններ։ Արևմտյան Հայաստանի «բարեկարգման» և հայության վիճակի բարելավման խնդիրներն արծարծող փաստաթղթերում կան հայկական հարցում արևմտյան դիվանագիտության կեղծ դիրքավորումն արտացոլող կարևոր տվյալներ (հատկապես 1912—1914 թթ. շրջանից)։

Հասարակական և բարեգործական կազմակերպությունների ֆոնդերից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը», «Թիֆլիսի հայկական դրամատիկական ընկերությունը», «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը», «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը», «Հայաստանի կոոպերատիվների միությունը» և այլն։

Նշված ֆոնդերում պահվող փաստաթղթերը լույս են սփռում մշակույթի օջախների, արվեստի և գրականության հայ նշանավոր գործիչների գործունեության, հայ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա։

Պետական կենտրոնական պատմական արխիվում են պահվում նաև բուրժուական ժամանակավոր կառավարության, ինչպես նաև դաշնակցական կառավարության պետական ղեկավարման օրգանների ֆոնդերը։

Այս և մյուս ֆոնդերում մեծ քանակությամբ նյութեր կան, որոնք ցույց են տալիս դաշնակցական կառավարության վարած ներքին ու արտաքին հակաժողովրդական քաղաքականությունը։ Նյութերը պատմում են հայ ժողովրդի կրած անլուր զրկանքների, հանուն ազատության, հանուն հացի և խաղաղության նրա մղած պայքարի մասին։

Պատմության կենտրոնական արխիվն ունի ընդամենը 210 ֆոնդ, 200000 պահպանման միավորներով։

Պատմության կենտրոնական արխիվն օրըստօրե հարստանում է ՍՍՌՄ կենտրոնական մյուս արխիվներից Հայաստան փոխադրվող, ինչպես նաև արտասահմանյան հայ գաղութներից մասնավոր կարգով ստացվող նյութերի հաշվին։

Այս արխիվն ունի հետևյալ երեք բաժինները՝ 1) Կոմպլեկտավորման և հաշվառման բաժին, որի խնդիրն է՝ հոգալ արխիվը նոր դոկումենտալ նյութերով հարստացնելու մասին, 2) Դիսատեղեկատու ապարատի ստեղծման բաժին։ Այս բաժինը շատ կարևոր գործ է կատարում։ Նա մշակում է առկա նյութերը, կլասիֆիկացիայի հիման վրա կազմում է ֆոնդերում ունեցած վավերագրական նյութերի կատալոգ, ճրագում ֆոնդերի և պահպանման միավորների բովանդակությունն ու կազմը։ Առանց այս բաժնի աշխատանքի պարզապես անհնար է ուսումնասիրողների պահանջները բավարարել և ժամանակին տալ նրանց պահանջած փաստաթղթերը։ 3) Օգտագործման և հրատարակման բաժին։ Այս բաժնի հիմնական պարտականությունն է՝ գիտական, մասսայական շրջանառության մեջ դնել պետական արխիվում պահվող առավել կարևոր նյութերը, նախապատրաստել ու կազմել վավերագրական նյութերի ժողովածուներ, արխիվային փաստաթղթերի վրա հիմնված ուսումնասիրություններ, կարևորագույն պատմական իրադարձություններն արտացոլող վավերագրական ցուցահանդեսներ, հաղորդումներ մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ և այլն։ Օգտագործման և հրատարակման բաժին կոչված է գործնական օգնություն ցույց տալու ռեսպուբլիկայի գրականագիտական կազմակերպություններին, հրատարակչություններին՝ պատմական փաստաթղթերի հրատարակման գործում։

2. Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ

Առ 1-ը հունվարի 1964 թ. ՀՌՍՇ ՊԿ արխիվում հաշվվում էր 487 ֆոնդ՝ 248 247 արխիվային միավորով (1920—1962 թթ.)։

Արխիվում կենտրոնացված են Հայկ. ՍՍՌ պետական իշխանության և կառավարման տեղական և բարձրագույն օրգանների, պետական, հասարակական ու կոոպերատիվ հիմնարկների ու ձեռնարկությունների, ուսումնական հաստատությունների, գիտական կուլտուր-կրթական, տեխնիկական, առողջապահական, ապահովագրական հաստատությունների ու կազմակերպությունների, դատական օրգանների, պրոֆմիությունների ու սպորտ միությունների գործունեության հետևանքով առաջացած արխիվային նյութեր։

Արխիվում պահվող փաստաթղթերը արտացոլում են Հայաստանի աշխատավորության պայքարը Հայաստանում սովետական իշխանության հաստատման ու ամրապնդման, ժողովրդական տնտեսության վերականգնման, արդյունաբերության, ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման, կուլտուրական շինարարության, ժողովրդի կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման համար։

Արխիվի առավել կարևոր ֆոնդերից է Հայկական ՍՍՌ կենտրոնական գործադիր կոմիտեի ֆոնդը (№ 112, 1922—1937 թթ.)։ Այս-

տեղ պահվում են ԿԴԿ-ի դեկրետները, որենքներն ու որոշումները՝ հողօգտագործման, ռազմա-ռևոլյուցիոն տրիբունալների վերակառուցման, աշխատավարձերի նոր ձևերի, տեղական ու կենտրոնական օրգանների կազմակերպման ու լուծարքի և այլ հարցերի մասին։ Ֆոնդում պահվում են ԿԴԿ-ի և ԺԿԽ-ի արձանագրությունները՝ կոլխոզ շինարարության գործում տեղական սովետների անելիքների, գավգործկոմների կազմակերպման, հանրապետության վարչական բաժանման և այլնի մասին։ Կան նյութեր Հայաստանի սովետների համագումարների, ժողովրդատնտեսական պլանների (1934—1936 թթ.) կատարման, գավգործկոմների գործունեության, հանրապետությունում կուլտուրլուսավորական աշխատանքների ընթացքի, բընակչության կազմի և այլ հարցերի վերաբերյալ։ Հետաքրքիր փաստաթղթեր կան Ալ. Մյասնիկյանի, Ա. Մռավյանի, Մոգիլևսկու և գրականության ու արվեստի անվանի գործիչների (Ալ. Շիրվանզադե, Ալ. Թամանյան, Մ. Սարյան, Մ. Սարյան, Հովհ. Աբելյան, Հր. Ներսիսյան, Վ. Վաղարշյան) կյանքի ու գործունեության մասին։

Իշխանության տեղական օրգանների գործունեությունը բացահայտող փաստաթղթեր կան գավառային, քաղաքային ու շրջանային գործադիր կոմիտեների ֆոնդերում։ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի ֆոնդում (№ 207, 1922—1958 թթ.) պահվում են նյութեր իշխանության տեղական ու կենտրոնական օրգանների ընտրությունների ու նրանց արդյունքների, ներգաղթած հայերին տեղավորելու միջոցառումների, Հայաստանի առանձին բնակավայրերը քաղաքատիպ ավանների ու քաղաքների վերակազմելու, Գերագույն սովետի սեսիաների ու նիստերի աշխատանքների, ժողկոմատների կազմակերպման, ժողովրդատնտեսական պլանների կատարման, գյուղատնտեսության կոլեկտիվացման ընթացքի, հանրապետության վարչա-տերիտորիալ բաժանման, ժողովրդական տնտեսության ու մշակույթի տարբեր բնագավառներում աչքի ընկնող անձանց պարգևատրումների և այլ հարցերի մասին։ Արխիվի հարուստ ֆոնդերից է Հայկական ՍՍՌ Ժողկոմխորհի (Մինիստրների սովետի) ֆոնդը (№ 113, 1920—1950 թթ.)։

Եղբայրական հանրապետությունների և հարևան երկրների հետ Հայաստանի հանրապետության արտաքին հարաբերություններն արտացոլող արժեքավոր փաստաթղթեր են պահվում «Հայկական ՍՍՌ արտաքին գործերի ժողկոմ» ֆոնդում (№ 114, 1920—1923 թթ.)։ Այստեղ կա նաև Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի հայտնի նամակը (պատճենը)՝ ուղղված Կովկասի կոմունիստներին։

Հանրապետության գյուղատնտեսության վերականգնման, կոլեկտիվացման ընթացքի, կոլտնտեսությունների ու սովխոզների ամրապնդման, նրանց գործունեության և զարգացման հեռանկարների մասին հետաքրքիր նյութեր կան Հայկական ՍՍՌ Հողժողկոմատ» (№ 123, 1920—1950 թթ.), «ՀՍՍՌ ջրային տնտեսության ժողկոմատ» (№ 174, 1922—1950 թթ.) և առանձին խոշոր կոլտնտեսությունների ու սովխոզների ֆոնդերում։ Հայկական ՍՍՌ թեթև և սննդի արդյունաբերության ստեղծման ու զարգացման վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր են պահվում ՀՍՍՌ «Տեղարդժողկոմատ» № 253, 1935—1943 թթ.), «Սննդարդյունաբերության ժողկոմատ» (№ 575, 1936—1951 թթ.), «Պարենժողկոմատ» (№ 102, 1920—1921 թթ.), «Մատակարարման ժողկոմատ» (№ 126, 1927—1937 թթ.) և մի շարք արդյունաբերական ձեռնարկությունների («Արարատ տրեստ», «Ծխախոտի ֆաբրիկա», «Հայպանիր տրեստ», «Հայրամբակկոմ», «Երևանի տրիկոտաժ ֆաբրիկա», «Ձեթօճառ կոմբինատ» և այլն) ֆոնդերում։

Հայաստանի գունավոր արդյունաբերության ստեղծման ու զարգացման վերաբերյալ կարևոր նյութեր կան «ՍՍՌՄ գունավոր մետալուրգիայի մինիստրության համամիութենական պղնձաձուլական և պղնձահանքային տրեստ» («ԱրՄՄեդ») (№ 428, 1923—1952 թթ.), «ՍՍՌՄ մետալուրգիայի արդյունաբերության մինիստրության Անդրկովկասյան պղնձամոլիբդենային տրեստ» (№ 496, 1951—1954 թթ.), «ՍՍՌՄ ժողկոմխորհի բարձրագույն խորհրդի Զանգեզուրի պղնձաձուլական կոմբինատի վարչություն» (№ 549, 1922—1936 թթ.), «ԱրՄՄԵԴ տրեստի Ալավերդու պղնձաձուլական կոմբինատ» (№ 187, 1921—1944 թթ.) և այլ ֆոնդերում։

Ժողովրդական լուսավորության և կուլտուրական շինարարության ուղղությամբ հանրապետությունում ծավալված աշխատանքների, ինչպես նաև կուլտուրայի առանձին անվանի գործիչների գործունեության վերաբերյալ արժեքավոր փաստաթղթեր են ամփոփված «ՀՍՍՌ լուսժողկոմատ» (№ 122, 1920—1955 թթ.), «ՀՍՍՌ պետհամալսարան» (№ 20, 1920—1950 թթ.), «ՀՍՍՌ մանկավարժական ինստիտուտ» (№ 569, 1922—1958 թթ.), «ՀՍՍՌ Պետհրատ» (№ 21, 1922—1929 թթ.), «Սունդուկյանի անվան պետթատրոն» (№ 22, 1923—1948 թթ.), «Վորշի անգրագիտություն» ընկերության (№ 23, 1925—1936 թթ.) և այլ ֆոնդերում։ Համանման նյութեր կարելի է գտնել

նաև առանձին տեխնիկումների ու դպրոցների ֆոնդերում։

Արխիվի կարևոր ֆոնդերից է «Հայկական ՍՍՌ վիճակագրական վարչություն» (N 163, 1908—1958 թթ.) ֆոնդը։

Ժողովրդական տնտեսության առաջին ճյուղերի և կուլտուր-լոգասավորական հիմնարկությունների պետական ֆինանսավորմանը վերաբերող նյութերը կենտրոնացված են հիմնականում ՀՍՍՌ ֆինժողկոմատ («Ֆինանսների մինիստրություն») ֆոնդում (N 117, 1921—1954 թթ.)։

Արխիվի կարևոր ֆոնդերից են ՀՍՍՌ արհմիությունների կենտրոնական խորհրդի (N 65, 1920—1939 թթ.) և արհմիութենական այլ կազմակերպությունների ֆոնդերը։

Արխիվում պահվում են նաև հանրապետության տրանսպորտային, կապի, առևտրական, շինարարական, սպորտային և հասարակական կազմակերպությունների ու հիմնարկների գործունեություն արտացոլող ֆոնդեր։

Սփյուռքահայերի հայրենադարձություն կազմակերպելու, նրանց տեղավորելու, բնակարանով և աշխատանքով ապահովելու մասին հետաքրքիր նյութեր կան «ՀՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտե» ֆոնդում (N 362, 1945—1949 թթ.)։ Այդ հարցերի վերաբերյալ տվյալներ կան նաև ՀՍՍՌ Մինիստրների սովետի արխիվային նյութերում։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոց. շինարարության պետական կենտրոնական արխիվը ունի հինգ բաժին՝ 1. կոմպլեկտավորման և հաշվառման, 2. գիտատեղեկատու ապարատի ստեղծման, 3. օգտագործման և հրապարակման, 4. հատուկ արխիվային ֆոնդերի և 5. տեղեկատու բաժիններ։

3. ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո դոկումենտների պետական կենտրոնական արխիվ

Հայկ. ՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո դոկումենտների պետական կենտրոնական արխիվը ունի ընդամենը 20 տարվա պատմություն։ Այստեղ պետք է կենտրոնացվեն հայ ժողովրդի պատմությունն ու կյանքի տարբեր բնագավառներն արտացոլող ֆոտո-ֆոնո և կինո փաստաթղթերը։ Շենքի սահմանափակ հնարավորությունների պատճառով առայժմ կենտրոնացվում են միայն ֆոտո-ֆոնո դոկումենտները, իսկ կինո փաստաթղթերի համար կառուցվելու է նոր, ավելի հարմար շենք (արխիվադարան)։

Ներկայումս ֆոտո-ֆոնո արխիվում կենտրոնացված է ավելի քան 70 000 փաստաթուղթ, որոնք մշակված են արխիվագիտական հիմունքներով, դասակարգված են, ունեն իրենց նեգատիվները և պոզիտիվները և ապահովված է ոչ միայն նրանց հավերժ պահպանությունը, այլև գիտահետազոտական նպատակների համար լայն չափերով օգտագործումը։ Ֆոտո փաստաթղթերի մի ամբողջ սերիա նվիրված է հին հայկական ճարտարապետությանը (Անիի, Զրվարթնոցի, Դատևի և բազմաթիվ այլ կոթողների)։ Բազմաթիվ ֆոտո փաստաթղթեր արտացոլում են հայ ժողովրդի անցյալն ու ներկան, սովորույթները, կենցաղը, բարքերը, արհեստները և այլն։

Ուսումնասիրողները կարող են այստեղ ծանոթանալ (կամ օգտագործել իրենց ուսումնասիրությունների համար) հայ ժողովրդի մարտական անցյալը պատկերող բազմաթիվ փաստաթղթերի հետ, սկսած 1812 թ. հայրենական պատերազմից մինչև մեր օրերը։

Առանձնապես մեծ սիրով և խնամքով են հավաքված հայ ազատագրական շարժումների, քաղաքացիական պատերազմների և հայրենական մեծ պատերազմի ժամանակ հայ ժողովրդի ակտիվ մասնակիցների վերաբերյալ ֆոտո փաստաթղթերը։

Ռևոլյուցիոն շարժումների և Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար ակտիվ մարտիկների բազմաթիվ պորտրեների պահպանումը և նրանց օգտագործումը այս արխիվի լավագույն գործերից մեկն է։

Մի ամբողջ պատկերասրահ կարելի է զարդարել հայ ժողովրդի արվեստի զարգացման ու նրա ականավոր ներկայացուցիչներին նվիրված ֆոտո-ֆոնո նյութերով։ Մեծ խնամքով ու սիրով կենտրոնացված են Հայաստանի մայրաքաղաք Երևանի և ռեսպուբլիկայի մյուս քաղաքների հարաճուն վերելքն արտացոլող ֆոտոնյութերը։ Ուսումնասիրողը կարող է այդ պատկերավոր լուսանկարների միջոցով վառ համեմատություններ անել մեր քաղաքների, նրանց շինարարության հոյակապ ներկայի և մինչռևոլյուցիոն շրջանի աննախանձելի վիճակի միջև։ Ֆոտո-ֆոնո-կինո փաստաթղթերի կենտրոնացումը և օգտագործումը ապագայում կրնդունի ավելի լայն տարածում և ավելի լայն չափեր։

Երբ կկառուցվի հատուկ շենք այդ արխիվի համար, հնարավորություն կստեղծվի ի մի կենտրոնացնել առաջին հերթին Հայաստանի կինոստուդիայի ողջ պատմության ընթացքում ստեղծված բոլոր կինոնկարների օրինակները և ապահովել սրանց հավերժ պահպանումը հետագա սերունդների համար։ 50—100, 150 և ավելի տարիներ հետո, հայ հանդիսականը հնարավորություն կունենա դիտելու «Ասա-փուչ», «Պեպո», «Նամուսը», «Սիրտը երգում է» և մյուս կինոնկարները։

4. Միկրոպատճենների, միկրոֆոտոպատճենների արխիվաղարան

Արխիվային վարչության աշխատանքների մեջ նոր է նաև այն, որ գնալով ավելի լայն մասշտաբներ են ընդունում միկրոպատճենահանման և ապահովագրական ֆոնդերի ստեղծումը։ Ապահովագրական ֆոնդ ասելով պիտի նկատի ունենալ պետական կենտրոնական արխիվներում եղած առավել կարևոր ֆոնդերի ու պահպանման միավորների միկրոպատճենների հանումը (ժապավենների վրա) և նրանց ֆեպատիվների ու պոզիտիվների առանձին-առանձին պահպանումը։ Միկրոպատճենները մշտական շրջանառությունից հանում են տեքստային թանկարժեք փաստաթղթերը, նպաստում նրանց երկարակեցությանը կամ փոխարինում նրանց, եթե նրանք բոլորովին անընթեռնելի են դառնում կամ, ինչ-ինչ պատճառներով՝ ոչնչանում։

Սակայն միկրո և ֆոտոպատճենների նշանակությունը մեր ռեսպուբլիկայի պայմաններում առանձնապես մեծ է այն պատճառով, որ նա հնարավորություն է տալիս ՍՍՌՄ կենտրոնական պետական արխիվներից տասնյակ հազարավոր փաստաթղթեր, որոնց իսկական տեքստերը հնարավոր չէ փոխադրել մեզ մոտ, պատճենահանել և փոխադրել Երևան։ Անշուշտ դրանք կապված են որոշակի նյութական-դրամական միջոցների ծախսման հետ, սակայն դրա առաջ չպետք է կանգ առնել։ Հենց միայն 1963 թ. մեր պատմության կենտրոնական արխիվն այդ ճանապարհով 100 000-ից ավելի կադր փաստաթղթեր է փոխադրել Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և այլ արխիվներից։ Այդ աշխատանքները էշարունակվեն չթուլացող թափով։ ՍՍՌՄ արտաքին գործերի մինիստրության արխիվում, ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի, սոցիալիստական շինարարության և պետական կառավարման պետական օրգանների արխիվում, ռազմական կենտրոնական արխիվներում պահվում են հայ ժողովրդի պատմության և նրա ականավոր գործիչների գործունեության հետ անմիջապես կապ ունեցող հազարավոր փաստաթղթեր, որոնց միկրո-ֆոտոպատճենները պետք է աստիճանաբար փոխադրել մեր կենտրոնական արխիվները։ Դրանով մենք ոչ միայն հարստացնում ենք մեր արխիվները, այլ նաև լայն հնարավորություն ստեղծում գիտ. ակադեմիայի և ՀՍԻՀ-երի ուսումնասիրողների համար, մասամբ ազատելով նրանց Մոսկվա, Լենինգրադ գործուղումներից։

Այժմ առանձնացված և կահավորված է հատուկ արխիվաղարան միկրոֆոտոպատճենների համար, կա սարքավորված լաբորատորիա, որի աշխատանքները ենթակա են հետագա կատարելագործման ու հարստացման ժամանակակից տեխնիկայով ու մեխանիզմներով։ Այս պրոգրեսիվ երևույթը արխիվային գործում ունի մեծ հեռանկարներ։ Շատ հարցեր, կապված միկրոժապավենների պահպանման և ավելի ռացիոնալ օգտագործման հետ, աստիճանաբար կատարելագործվում են սեփական փորձի, միության կենտրոնական լաբորատորիաների և արտասահմանյան փորձի հիման վրա։

5. Արխիվների գիտա-տեղեկատու գրադարան

Հայկ. ՍՍՌ պետական կենտրոնական արխիվների գիտա-տեղեկատու գրադարանը երկար տարիներ մատնված էր անուշադրության։ Գրադարանը տասնյակ տարիներ ոչ միայն չէր հարստացվել գիտա-տեղեկատու նշանակություն ունեցող գրականությամբ, այլ եղածն էլ պահվում էր ցաք ու ցրիվ վիճակում։

Վերջին ժամանակներս լուրջ քայլեր են կատարվել գիտա-տեղեկատու գրադարանի կոմպլեկտավորման ուղղությամբ։ Գրադարանի համար առանձնացված են լավագույն ու կահավորված սենյակներ։ Նոր են բերվում հայկական անցյալ և ներկա պարբերական մամուլի, հանդեսների, ամսագրերի հազվագյուտ օրինակներ։ Սովետական շրջանի թերթերը կազմրվել և գիտական շրջանառության մեջ են դրվել։ ՍՍՌՄ տարբեր քաղաքներից և արտասահմանից նոր են բերվում հազվագյուտ գրքեր, որոնք լուրջ գիտական նշանակություն ունեն և մեծ օժանդակություն են ցույց տալիս ուսումնասիրողներին։

Ընթերցասրահը, որտեղ պարապում են արխիվային փաստաթղթերը ուսումնասիրողները, նույնպես կոմպլեկտավորված է հանրագիտարաններով, մարքսիզմի կլասիկների երկերով, բառարաններով և տեղեկատու կարգի այլ գրականությամբ։ Սակայն մեր գիտա-տեղեկատու գրադարանը դեռևս շատ է ետ մնում ՍՍՌՄ մյուս պետական արխիվների գրադարաններից։ Այս գործում մենք դեռ շատ անելիքներ ունենք։

Մեր հաղորդման վերջում հարկ ենք համարում կանգ առնել երկու հարցի վրա. ա. սփյուռքահայության օգնությունը Հայաստանի կենտրոնական արխիվներին, բ. գիտական աշխատանքների վիճակը պետական կենտրոնական արխիվներում։

1. Սփյուռքահայության օգնությունը Հայաստանի պետական արխիվների հարստացման գործին

Անցյալ տարի Հայաստանի պետական կենտրոնական պատմական արխիվը մի շրջաբերա-

վլանով դիմեց արտասահմանյան հասարակական և հայրենակցական կազմակերպություններին, որպեսզի նրանք նպաստեն արտասահմանում առանձին անձանց կամ հասարակական կազմակերպությունների մոտ պահվող գիտապատմական նշանակություն ունեցող փաստաթղթերի, վավերագրերի, հազվագյուտ ձեռագրերի, գրքերի, պարբերական մամուլի օրինակների առաքման դեպի մայր հայրենիք։ Եվ հիրավի, ինչպես հենց իրենք, սփյուռքահայերն են գրում, եթե այժմ այդ չկատարվի, ապա հետագայում գործը կարող է բոլորովին դժվարանալ, հենց այն պատճառով, որ նախ փաստաթղթերն ու վավերագրերը ոչնչանում են, ապա հասկանալի պատճառով աստիճանաբար քչանում է այն հայերի քանակը, որոնք կապված են հայ գրական մշակույթի հետ։ Մի շարք երկրներում, որտեղ հայկական դպրոցներ չկան, նոր սերունդը համարյա չի տիրապետում հայերեն գրական լեզվին։

Պետք է ասել, որ արտասահմանյան առաջավոր հայ մարդիկ ջերմորեն արձագանքեցին մեր կոչին։ Արդեն ստացված են մի քանի տասնյակ նամակներ հայ առաջադիմական դործիչներից, որոնք իրենց պատրաստակամությունն են հայտնում օգնել մեր պետական արխիվների կոմպլեկտավորմանը։

Այսպես, օրինակ, Բեյրութում լույս տեսնող «Նոր կյանք» թերթի աշխատակից Սամվել Գաղանյանը գրում է. «Ուրախ ենք, որ Սովետական Հայաստանի պետությունը այս տեսակ հսկայական և շատ կարևոր գործի մը ձեռնարկած է»։ Ֆրեզնոյից, Հալեպից, Փարիզից, Հայֆայից, Սալզբուրգից, Բոստոնից, Մարսելից և այլ քաղաքներից ստացվել են բազմաթիվ սրտառուչ նամակներ։

Փարիզի Նուբարյան Մատենադարանի վարիչ Ա. Սայմասլյանը գրում է. «Կրկնած եմ միշտ և այսօր ալ, թե ոչ միայն անոնք (փաստաթղթերը—Ա. Հ.) Հայաստանում պահվում են հոգատարությամբ, սրրությամբ, այլ նաև՝ ինչոր կարևոր է, օգտագործվում են, նպատակին կծառայեցվեն հայ պատմությունն ու մշակույթը լուսաբանող հոգուտ ազգին և հայրենիքին»։

Ֆրեզնոյից (ԱՄՆ) Արա Շիրազյանը նորից հաստատում է, որ՝ «Երևանն է հանգրվանը և կենտրոնատեղին հայ մշակույթի, հայ արվեստի վավերաթղթերու, փաստաթղթերու գանձարան»։

Արտասահմանյան մեր հայ եղբայրներից, շատերն արդեն ոչ միայն խոսքով, այլև դործով սկսել են օգնել Հայաստանի պետական արխիվների հարստացման գործին։

Այս գործը պետք է շարունակել չթուլացող թափով։

2. Գիտահետազոտական աշխատանքների ծավալումը պետական կենտրոնական արխիվներում

ՍՍՌՄ կառավարության որոշման համաձայն պետական կենտրոնական արխիվները դասվում են գիտահետազոտական հաստատությունների կարգին։ Հաստիքներով հաստատված են կրտսեր և ավագ գիտաշխատողներ։ Արխիվային վարչության կից ստեղծված է գիտական խորհուրդ, որտեղ, բացի փորձված արխիվային աշխատողներից, ընդգրկված են ռեսպուբլիկայի մի շարք հայտնի գիտնականներ և պետական, հասարակական գործիչներ։ Գիտխորհուրդը իր նիստերում քննության է առնում արխիվային շինարարության սկզբունքային բոլոր հարցերը և ուղղություն տալիս նրանց լուծմանը։

Արխիվային վարչության կից գոյություն ունի գիտա-հրատարակչական բաժին, որը արխիվների հետ միասին հրատարակության է պատրաստում կարևորագույն դոկումենտների ժողովածուներ, ուսումնասիրություններ և գիտամեթոդական ձեռնարկներ։

Պետական կենտրոնական արխիվների ջանքերով արդեն պատրաստ են հրատարակության հայտնի ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու անտիպ նամակների ու գրագրությունների (մոտ 20 մամուլ) և «Կուլտուրական շինարարությունը Հայաստանում 1921—1941 թթ.» ժողովածուները։ Կարելի է ավարտված համարել՝ «Հայաստանի ինդուստրիալիզացիան» ժողովածուն։ Այս տարի կավարտվի հայ ազատագրական շարժման ակտիվ մասնակից Անդրանիկ Օզանյանի կյանքն ու գործունեությունը պատկերող փաստաթղթերի ժողովածուի կազմումը և այլն։

Կարգավորվել է արխիվային վարչության օրգան «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի լույս ընծայումը, որի էջերում բացի հազվագյուտ արխիվային փաստաթղթերից, հրապարակվում են նաև գիտական հոդվածներ, ուսումնասիրություններ և արխիվային հաղորդումներ։

Պետական արխիվների դիտական աշխատողներից 10 հոգի աշխատում են գիսերտացիոն թեմաների վրա, իսկ մյուսներն ունեն անհատական գիտական թեմատիկ պլաններ։ Այդ գործի հաջող ելքից որոշ չափով կախված է նաև արխիվներում գիտահետազոտական աշխատանքների հետագա ծավալման խնդիրը։

Ս. թ. մայիսին Մոսկվայում գումարվեց արխիվիստների գիտական կոնֆերանս, որտեղ հանգամանորեն քննության են առնվել ՍՍՌՄ-ում արխիվային գործի տեսական ու գործնական պրոբլեմները։ Հատկապես մեծ ուշադրություն

է զարգացնել պետական, գերատեսչական արխիվների կոմպլեկտավորման, փաստաթղթերի գիտական մշակման, հրատարակման, միկրոպատճենահանման և կադրերի որակի բարձրացման վրա։

Անցած՝ 1963 թ. ՍՍՌՄ Մինիստրների սովետը և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետը հատուկ որոշումներ են ընդունել արխիվային գործի դրվածքի բարելավման մասին։ Այդ որոշումների կատարման համար մշակված ու հաստատված են գործնական պլաններ և, կարելի է ասել, որ ռեսպուբլիկայում քիչ գործ չի արված։ Հատկապես ուշադրություն է դարձվում տեխնիկական, նախագծային փաստաթղթերի հաշվառմանն ու պահպանմանը։

Մեր ռեսպուբլիկայի մի շարք մինիստրություններ, գերատեսչություններ, առաջատար խոշոր ձեռնարկություններ և ուսումնական հաստատություններ լուրջ և բարեխիղճ գործ են կատարում այդ ուղղությամբ։ Մինիստրների սովետին կից կենտրոնական վիճակագրական վարչությունը, պետ. պլանային հանձնաժողովը, ֆինանսների մինիստրությունը, Հայկ. ՍՍՌ գիտ. ակադեմիայի նախագահությունը, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, պետական համալսարանը, Երևանի քաղսովետը, Հայէլեկտրոշին գործարանը և մի շարք այլ կազմակերպություններ պատշաճ ուշադրություն են դարձնում իրենց արխիվային նյութերի մշակմանն ու պետական պահպանությանը։ Դրանց կողքին կարելի է նշել այնպիսի հիմնարկ-ձեռնարկների, որոնք շատ սխալ և ոչ լուրջ վերաբերմունք են ցույց տալիս դեպի պատմա-գիտական նշանակություն ունեցող փաստաթղթերի մշակումն ու դրանց պետական պահպանության հանձնումը։

Պետական կենտրոնական արխիվների հետագա հարստացումը մեծ չափով կախված է գերատեսչական արխիվների աշխատանքների դրվածքից, և մենք այս ուղղությամբ շատ անելիքներ ունենք։

Ռեսպուբլիկայի պետական կենտրոնական արխիվների հետագա հարստացման և փաստաթղթերի լայն մասշտաբներով օգտագործման դրվածքի ընդհանուր բարելավման համար մեծ նշանակություն ունի ռեսպուբլիկայի գիտահետազոտական հաստատությունների և այլ կազմակերպությունների հետ մեր կապերի ուժեղացումը։ Հատկապես մեծ նշանակություն ունի մեր կապերի ուժեղացումը Մատենադարանի, գրականության ու արվեստի, պատմության թանգարանների, Մյասնիկյանի անվան պետական գրադարանի հետ։ Մենք պետք է մշտական կապ հաստատենք նաև Հայկ. ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության և գրականության ինստիտուտների հետ։

Արտասահմանյան երկրների հետ կուլտուրական կապի պահպանման ընկերությունը, Հայկ. ՍՍՌ արտաքին գործերի մինիստրությունը, Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր հայկական եկեղեցական գործերի կոմիտեն, Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետին կից գլավլիտը հանդիսանում են այն հիմնական օրգանները, որոնք լայն հնարավորություններ ունեն օգնելու և աջակցելու՝ ռեսպուբլիկայի պետական կենտրոնական արխիվները նոր փաստաթղթերով, վավերագրերով, գրականությամբ ու պարբերական մամուլով հարստացնելու գործին։ Եվ պետք է ասել, որ նրանք արդեն որոշ գործնական քայլեր կատարել են այդ ուղղությամբ։

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր արխիվային վարչության պետ)

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

DAVID DE SASSOUN. Epopée en vers. Traduit de l'arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit. Préface de Joseph Orbéli. Le Mensil-sur-l'Estrée (Eure), Gallimard, 1964. 400 p. (Caucase, Collection UNESCO d'Oeuvres Représentatives. Série Arménienne).

«Սասունցի Դավիթ» ժողովրդական հերոսական էպոսի հրատարակությունն է, որը մեծ վարպետությամբ ֆրանսերենի է թարգմանել անվանի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին և շքեղ տպագրությամբ լույս է ընծայել ՅՈՒՆԵՍԿՕ-ի մատենաշարով։ Թարգմանությունը կատարված է էպոսի հայաստանյան հրատարակության 1939 թ. լույս տեսած համահավաք բնագրից։

Գրքի սկզբում (էջ 9—34) զետեղված է հայերեն համահավաք բնագրի համար ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գրած առաջաբանը, որին հաջորդում է թարգմանչի՝ Փարիզի արևելյան կենդանի լեզուների ազգային դպրոցի դասախոս, պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդիի ներածական հոդվածը (էջ 35—50)։

Ներածության մեջ խոսվում է հայ գրականության առանձնահատուկ [illegible] մասին։ Հեղինակը առանձնապես անդրադառնում է հայկական առասպելներին, [illegible]